

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԻՆԵ ԷԴՈՒԱՐԴԻ ՓԱԹՅԱՆ

**ՀԱՅ ԵՎ ՋՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒՑԹՆԵՐԻ
ԼԵԶՎԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ՝
ՀԱՅԵՐԵՆԻ ՋՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ**

Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Գ. Վ. Եղիազարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, դոցենտ
Ն. Լ. Հարությունյան

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Հ.Ս. Քաջբերունի

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-ռուսական (Սլավոնական)
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հոկտեմբերի 22-ին, ժ. 11-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ ԵՊՀ-ում գործող 009 <<Օտար լեզուներ>> մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2014թ. սեպտեմբերի 20-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բ.գ.դ., պրոֆ.

Ե. Լ. Երզնկյան

Լեզվաբանության զարգացման ներկա փուլը բնորոշվում է լեզվի և արտալեզվական իրականության փոխհարաբերությունների վերաիմաստավորման հենքով: Իրականության մասին մարդու գիտելիքների ուսումնասիրությունն այսօր անհնար է իրականացնել առանց տվյալ ազգի, հանրության լեզվամտածողությանը և լեզվաճանաչողությանն անդրադառնալու:

Լեզու—ճանաչողություն աղերսներն ուսումնասիրող լեզվաճանաչողաբանության հիմնական միավորներից է **հասկացույթը**, որի առանձնահատկությունների մեկնաբանման խնդրում կենտրոնական տեղ է զրավում **ճանաչողական փոխաբերությունը**¹՝ որպես մարդկային մտածողության վերլուծություն և համադրում կատարելու ունակությունների դրսևորում: Ժամանակակից ճանաչողական գիտությունը բնորոշում է փոխաբերությունը որպես «մտավոր գործունեության, աշխարհի կարգայնացման, հասկացությանացման, գնահատման և մեկնաբանման միջոց»:¹ Ճանաչողական փոխաբերությունները միտված են բացահայտելու աշխարհի պատկերը լեզվակրի ընկալմամբ, քանի որ այս կամ այն երևույթը ներկայացնող լեզվական կադապարները պայմանավորված են տվյալ ժողովրդի կամ անհատի ճանաչողական կադապարներով:

Սույն առեմախոսության **առարկան *hug* և *gnip*** հասկացություններն են, դրանց լեզվականացման առանձնահատկությունները անգլերենում՝ հայերենի զուգադրությամբ: Այն փաստի նկատառմամբ, որ միջմշակության շփումների մակարդակում մեծապես կարևորվում է ցանկացած բառի, բառակապակցության, հասկացույթի համարժեք ընկալումն այլ լեզվակրի կողմից, կարող ենք փաստել, որ այս կամ այն լեզվում հասկացությունների ճանաչողական ամենատարբեր զուգորդումների վերհանումը, ապա նաև մեկ այլ լեզվին բնորոշ ճանաչողական կադապարների հետ զուգադրումը բնավ ժամանակավրեպ չէ լեզվաբանական ուսումնասիրությունների համատեքստում:

Որպես ուսումնասիրության **լեզվանյութ** են ծառայել անգլերեն և հայերեն բառարաններից դուրս գրված ***hug* և *gnip*** հասկացություններն առկայացնող բառային և դարձվածային միավորները (այսուհետ՝ ԴՄ), առաձներն ու ասացվածքները:

Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նախ և առաջ ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրություններում ճանաչողական հասկացությունների վերլուծության, դրանց տեղն ու դերը տվյալ ժողովրդի արժեհամակարգում վեր հանելու կարևորությամբ: ***hug* և *gnip***

¹ Шахнаров А.Л. Психоллингвистика: когнитивные аспекты // Традиционные проблемы языкознания в свете новых парадигм знания. М.: Наука, 2000, с. 120.

հասկացույթների վերլուծությունը և դրանց զուգադրումը հնդեվրոպական լեզվաընտանիքի երկու հեռավոր ճյուղերին պատկանող լեզուներում, **արդիական է** ոչ միայն լեզվական ընդհանրությունների և տարբերությունների վերհանման առումով: Նման ուսումնասիրությունը կարող է նպաստել երկու ժողովուրդների փոխշփումների պահանջի հենքի վրա կարևորվող միջլեզվական և միջմշակութային առնչությունների զարգացմանը, ինչպես նաև մշակութային արժեքների փոխանցման նպատակով անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն համարժեք թարգմանությունների իրականացմանը:

Ուսումնասիրության գիտական նորույթը: Վերջին տարիներին բազմաթիվ տեսաբաններ են հետաքրքրվել *hug* և *gnip* հասկացույթներով և տարբեր տեսանկյուններից ուսումնասիրել դրանք տարբեր լեզուներում:² Մակայն մինչև այժմ անգլերենում չեն դիտարկվել *hug* և *gnip* հասկացույթները՝ դրանց հասկացական, պատկերային և արժեքային բաղադրիչների համալիր ուսումնասիրությամբ և հայերենի հետ զուգադրությամբ: Ատենախոսության մեջ առաջին անգամ հստակորեն առանձնացվում և բնութագրվում են *hug* և *gnip* հասկացույթները՝ ճանաչողական փոխաբերականացման տեսանկյունից, վերլուծվում է դրանց լեզվական առկայացումը բառային և դարձվածային միջոցներով, ներկայացվում են այդ հասկացույթների զուգորդումները անգլերենում և զուգադրվում հայերենի հետ: **Նոր** է կորպուսային լեզվաբանության ընձեռած տվյալների հիման վրա *hug* և *gnip* հասկացույթների վերլուծության փորձը անգլերենում՝ հայերենի զուգադրությամբ. այս կերպ բացահայտվում են համընդհանուր այս հասկացույթների ընկալման և գործածության հաճախականության տարբերությունները, որն էլ տվյալ լեզվակրի լեզվական ինքնության վկայությունն է:

Ատենախոսության նպատակն է վերլուծել *hug* և *gnip* հասկացույթների իմաստային և արժեքային առանձնահատկություններն անգլերենում, վեր հանել դրանցում առկա փոխաբերական շերտերը և բովանդակային համալրման առանձնահատկությունները բրիտանական հանրույթի գիտակցության մեջ, ինչպես նաև վերլուծել դիտարկվող հասկացույթների բառայնացման մեխանիզմներն ու լեզվական կադապարման միջոցները անգլերենում և զուգադրել հայերենի հետ: Աշխատանքի **նպատակն** է նաև վերահաստատել այն տեսակետը, որ *hug* և *gnip* հասկացույթները հավաքական գիտակցության ընդհանրական միավորներ են, որոնք արտացոլում են հասկացական և արժեքային մի շարք առանձնահատկություններ և կարող են հիմք ծառայել բրիտանական և հայ ազգային լեզվամտածողության բնորոշ գծերի

² Палутина О.Г. Асимметрия в структуре концептов первостихий и их номинаций в русском языке и американском варианте английского языка. Дис. канд. филол. наук. Казань, 2004; Богданова И.А. Функционирование архетипического концепта «вода» в текстах народного и индивидуального творчества. Автореф. дис. канд. филол. наук. Челябинск, 2006.

բացահայտման, դրանցում առկա նմանությունների և տարբերությունների վերհանման և հիմնավորման համար:

Այս նպատակին հասնելու համար աստենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. համակողմանիորեն ուսումնասիրել ճանաչողական լեզվաբանության հիմնական միավոր **հասկացույթը** և դրա վերլուծության հիմնական մեթոդները՝ մասնավորապես, ճանաչողական փոխաբերության տեսությունը,
2. վերլուծել **հաց** և **ջուր** հասկացույթների իմաստային առանձնահատկությունները և դրանց կարգայնացման բառային միջոցները,
3. ուսումնասիրել **հաց** և **ջուր** հասկացույթների բառակազմական հնարավորությունները և կիրառման հաճախականությունը անգլերենում և զուգադրել հայերենի հետ,
4. վերլուծել **հաց** և **ջուր** հասկացույթներն առկայացնող դարձվածային միավորները, ասացվածքներն ու առածները, վեր հանել դրանց հիմքում ընկած ճանաչողական փոխաբերություններն անգլերենում և զուգադրել հայերենի հետ,
5. կառուցել **հաց** և **ջուր** հասկացույթների զուգորդային դաշտերը՝ անգլերենում և զուգադրել դրանք հայերենի հետ:

Ուսումնասիրության **տեսական-մեթոդաբանական** հիմքը լեզվի դիտարկումն է մարդաբանական հարացույցում, որը կարևորում է լեզվակրի արժեհամակարգը, նրա ճանաչողական և մտածական կադապարները: Աշխատանքում օգտագործվել են ճանաչողաբանության (Է. Բենվեկիստ, Չ. Ֆիլմոր, Յու. Ստեպանով, Է. Ռոշ, Ե. Կուբրյակովա, Վ. Մալովա, Յու. Ստեպանով և այլք), հասկացութաբանության, ճանաչողական փոխաբերության տեսության ոլորտի տեսաբանների (Ա. Վեժբիցկայա, Ե. Կարաուով, Ա. Բարուշկին, Ի. Ստեռնին, Ս. Վորկայով, Վ. Կարասիկ, Ն. Արությունովա, Վ. Կրասնիխ, Ջ. Լակոֆֆ, Մ. Ջոնսոն, Ֆ. Շարիֆիան, Է. Բուդան, Է. Մաքթորմաք, Ռ. Գիբս և այլք) առաջ քաշած կարևորագույն դրույթներն ու հայեցակերպերը:

Լեզվաբանական վերլուծության **մեթոդների** մեր ընտրությունը բխում է ուսումնասիրվող նյութի բնույթից և նպատակից. **հաց** և **ջուր** հասկացույթների վերլուծության ընթացքում կիրառվել են բառարանային համատարած ընտրանքի, հասկացութային վերլուծության, ճանաչողական փոխաբերականության, համաժամանակյա զուգահեռ մեկնաբանման մեթոդները (երբեմն անհրաժեշտություն է զգացվել դիմել տարածամանակյա քննության, քանի որ հարկ է եղել պարզել քննվող բառերի ստուգաբանությունը և ԴՄ-ների ծագման աղբյուրը): Կատարվել է նաև լեզվաբանական կորպուսների ուսումնասիրություն և վիճակագրական վերլուծություն:

Ուսումնասիրության տեսական նշանակությունը: Սույն հետազոտության արդյունքները կարող են նպաստել ոչ միայն մեկ, այլև մի քանի լեզուների հասկացութային համակարգերի համեմատական բնույթի հետազոտ ուսումնասիրությունների իրականացմանը, ինչպես նաև լեզվաճանաչողության

շրջանակներում հասկացութաբանության՝ մասնավորապես, ճանաչողական փոխաբերության տեսության հետագա զարգացմանը:

Ուսումնասիրության գործնական արժեքը: Նման հետազոտության արդյունքները կարող են ունենալ մի շարք գործնական կիրառություններ՝ օգտագործվելով անզլերենի իմաստաբանության, հասկացութաբանության, ճանաչողական լեզվաբանության, միջմշակութային հաղորդակցության դասընթացներում, ինչպես նաև՝ գործնական ձեռնարկներ և բառարաններ ստեղծելիս:

Աշխատանքի **կառուցվածքը** բխում է ատենախոսության մեջ արծարծվող խնդիրներից. այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում են ուսումնասիրության նպատակները, խնդիրներն ու մեթոդները, թեմայի ընտրությունը, արդիականությունը, գիտական նորայրը, տեսական և գործնական արժեքը:

Առաջին գլուխը՝ «Ժամանակակից հասկացութաբանության զարգացման հիմնական ուղղությունները» կազմված է երկու ենթագլխից: **Առաջին ենթագլխում («Հասկացույթը որպես ճանաչողաբանության հիմնական միավոր»)** ուսումնասիրվում է լեզվաճանաչողական հասկացույթի գաղափարը՝ ըստ տարբեր տեսաբանների հայեցակարգերի, ընդհանուր գծերով ներկայացվում է ճանաչողական փոխաբերությունը՝ որպես հասկացույթների վերլուծության և լեզվաճանաչողական կաղապարների բացահայտման միջոց:

Ազգային հասկացութաբանության ուսումնասիրությունը տվյալ մշակույթի եզակիությունն ու համընդհանրությունը բացահայտելու միջոցներից է: Հասկացույթի, այսպես կոչված, «շերտերի» վերլուծությունը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել ազգի գիտակցության մեջ առկա հասկացույթների մասին: Հենց այդպիսի շերտեր են հասկացույթի հիմքում ընկած **փոխաբերական կաղապարները:**

Այսպիսով, մեր ուսումնասիրությունում **հասկացույթը** դիտարկել ենք որպես **«լեզվական հիմնական միավոր»** (Ն. Արությունովա, Ս. Վորկայով, Յու. Ստեպանով և այլք), **հասկացական, պատկերային և արժեքային բաղադրիչների ամբողջություն** (Ս. Վորկայով, Վ. Կարասիկ, Յու. Ստեպանով և այլք) և որպես **ճանաչողական փոխաբերության միջոցով լեզվում առկայացող կարգային կաղապար** (Ջ. Լակոֆֆ, Մ. Ջոնսոն, Ֆ. Շարիֆիան և այլք):

Երկրորդ ենթագլխում («Փոխաբերությունը որպես մտածողության գործիք») դիտարկել ենք ճանաչողական փոխաբերությունը՝ որպես հասկացույթների հասկացական, արժեքային և պատկերային զուգորդումների բացահայտման միջոց:

Ըստ ճանաչողական փոխաբերության տեսության՝ փոխաբերությունը ոչ միայն խոսքի, այլև մտքի միավոր է, որն օգնում է հասկանալ և ընկալել մի ճանաչողական ոլորտը՝ մեկ այլ ճանաչողական ոլորտի միջոցով: Ըստ Ջ. Լակոֆֆի և Մ. Ջոնսոնի՝ փոխաբերություններն ընգրկուն և բազմագործառույթ

գործիքներ են, որոնք ներթափանցում են ոչ միայն լեզվական, այլև մտածողության ոլորտ, և «մեր առօրյա հասկացական համակարգը, որի շրջանակներում մենք մտածում և գործում ենք, իր բնույթով փոխաբերական է»:³ Ըստ Է. Աթայանի՝ փոխաբերությունը «թևավոր տեղաշարժ է՝ թռիչք մի իմաստաբանական գազաթից դեպի մյուսը»,⁴ և հիմնված է առարկաների կամ երևույթների նմանության վրա: Ըստ Ու. Քուայնի՝ «մտածողության և լեզվի համար չկա ավելի հիմնարար գործիք, քան մեր՝ նմանություններ գտնելու ունակությունը»:⁵ Եվ ինչպես Ս. Գասպարյանն է նշում՝ «... վերաիմաստավորվել է փոխաբերությունը որպես զուտ գեղագիտական արժեք ունեցող լեզվական երևույթ ընկալելու տեսակետը: Փոխաբերությունը սկսել են ուսումնասիրել որպես աշխարհի լեզվական պատկերը ձևավորող միջոց»:⁶ Ըստ Գ. Գասպարյանի՝ «...այստեղ ենթադրվում է ելք դեպի միջմշակութային տարածք..., որը մտային այնպիսի պատկերներ է առաջացնում հասցեատիրոջ գիտակցության մեջ, որոնք խթանում են ճանաչողական բազայի օգտագործումը՝ որպես վերջինիս խորհելու, ճանաչելու և ընկալելու գործընթացներն ակտիվացնող անհրաժեշտ գիտելիքների ամբողջություն»:⁷

Այսպիսով, փոխաբերությունը լավագույնս ներկայացնում է լեզու - մտածողություն անհերքելի կապը, քանի որ, իր արտահայտությունը գտնելով լեզվական միավորներում՝ այն բացահայտում է լեզվակիր հանրույթի աշխարհընկալման յուրահատկությունները, այսինքն՝ դառնում է ճանաչողության միավոր: **Հսգ** և **ջուր** հասկացությունները նույնպես տարբեր ժողովուրդների լեզվամտածողության մեջ հաճախ ընկալվում են փոխաբերաբար: Ուստի հիմք ընդունելով Ջ. Լակոֆֆի և Ս. Ջոնսոնի ճանաչողական փոխաբերության տեսությունը՝ կարող ենք ներկայացնել **«Հացը կեցություն է»** և **«Ջուրը կեցություն է»** ընդհանուր փոխաբերությունները, որոնց վերլուծությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու **հսգ** և **ջուր** հասկացությունների ճանաչողական արժեքը անգլերենում և ստացված արդյունքները հայերենի հետ զուգադրելու:

Երկրորդ գլխի («Հսգ հասկացությոթ բրիտանացիների և հայերի աշխարհի լեզվական պատկերում») առաջին ենթագլխում («Հսգ հասկացույթի լեզվական առկայացումը անգլերենում՝ հայերենի զուգադրությամբ») վեր են հանվում հսգ

³ Lakoff G., Johnson M. Metaphors we live by. Chicago: The University of Chicago Press, 2003, p. 25.

⁴ Աթայան Է. Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը: Ե., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1981, էջ 279:

⁵ Quine W. V. A Closer Look // " Journal of Philosophy". 74(7), July 1977, p. 157.

⁶ Гаспарян С.К. Фигура сравнения в функциональном освещении. Ер.: Изд-во Ер. ун-та, 2000, с. 52.

⁷ Гаспарян Г. Р. Когнитивная база как основа формирования глобальной связности текста в межкультурном пространстве // Тезисы международной конференции. "Язык сквозь призму культуры". Ер.: Изд-во Лингва, 2008, с. 107.

համընդհանուր հասկացույթի հասկացական, արժեքային և պատկերային բաղադրիչները բրիտանացիների աշխարհի պատկերում և զուգադրվում հայերի աշխարհի պատկերի հետ:

Դարեր շարունակ մարդու կեցության կարևոր պայման է եղել **հացը**: **Հացի** պատմության ուսումնասիրությունը փաստում է, որ գրեթե բոլոր կենցաղավար քաղաքակրթություններում **հացն** ընկալվել է որպես *հիմնական սնունդ* և *մենասանհրաժեշտ պարեն*: Մակայն նույնիսկ նման համընդհանուր հասկացույթի անվանակարգումը, ինչպիսին **հացն** է, կասկած է հարուցում ոչ միայն բառագիտական բացարձակ համարժեքության մակարդակում, այլև տարբեր կերպ է ներկայանում տարբեր ժողովուրդների աշխարհի պատկերում:

Հաց հասկացույթն արտացոլում է հացամթերք ստեղծելու և մշակելու, և դրան կենսական կարևորություն վերագրելու բրիտանացիների բազմադար մշակույթը: Այն ժամանակից ի վեր, երբ Բրիտանական կղզիները բնակեցվեցին կելտական ցեղերով, բնակչության տնտեսությունը հիմնականում ագրարային էր, հետևաբար բրիտանացիների սննդի հիմնական աղբյուրը **հացահատիկային** մշակաբույսերն էին: Այդ փաստը չէր կարող չհանգեցնել բրիտանացիների՝ **հացին խորհրդանշական** իմաստներ վերագրելու իրողությանը, նրա *սրբացմանն* ու *գովարանմանը*: Դեռ ավելին, անգլերենում **հացը** խորհրդանշում էր **երջանիկ** կամ **դժբախտ կեցություն**. դրա ապացույցն է այն հին սնահավատությունը, որ եթե կինը կամ աղջիկը հացի մեջ պատառաքաղ կամ դանակ է մտցնում, ապա զրկում է իրեն երջանկությունից:

Անգլերենում **հաց** բառի ծագումնաբանական վերլուծությունից պարզ է դառնում, որ **bread** բառի անվանակարգման մեջ կա երկու՝ միմյանց հակադրվող իմակ՝ «**հաց, որը պատրաստված է թթխմամբ, ենթարկվել է դրոժավորման**» (**bread**) և «**սնթթխմամբ, բաղարջ հաց**» (**hlaef**),⁸ և այն ունի բառարանային հետևյալ իմաստները՝⁹ 1. *a usually baked and leavened (usually raised with or without yeast or other leavening agent) food made of a mixture whose basic constituent is flour or meal*, 2. *food, sustenance e.g. our daily bread*, 3. *livelihood*, 4. *slang: money*, 5. *Ecclesiastical . the wafer or bread used in a Eucharistic service*. 6. *(v) to cover with breadcrumbs or meal*. Այս վեց իմաստներում ներկայացված են անգլերենում **հացին** վերագրվող գրեթե բոլոր հատկանիշները: Հետաքրքրական են **bread** բառույթի **livelihood** և **money** իմաստները: Դարեր շարունակ **հաց** հասկացույթը զուգորդվել է հասարակական դիրքի, ինչպես նաև **ցորենով և այլուրով վճարվող տարատեսակ հարկերի** հետ, ինչպես օրինակ՝ *հողի հարկը*՝ **gafolbere /barley paid as rent** և այլն: Ուստի **հացը** և **հացահատիկային մշակաբույսերը** բրիտանական

⁸ Степанов Ю.С. Константы. Словарь русской культуры. Опыт исследования. М.: Языки русской культуры, 1997, с. 206.

⁹ Սեղմագրի ծավալից էլնելով՝ չենք ներկայացնում օգտագործված բառարանները. դրանք նշված են ատենախոսության գրականության ցանկում:

կեցության և լեզվաճանաչողական հարթույթի հիմնական և խորքային բաղադրիչներից են:

Հացի հանդեպ հայ ժողովրդի վերաբերմունքը պահպանվել է հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Հայ ժողովուրդը դիմակայել է բազում պատմահասարակական վայրիվերումների և այս համատեքստում չափազանց կարևորում է **հացը** և նրա ընկալումները: **Հացը** մեծագույն սրբություն է հայ ժողովրդի համար և իզուր չէ, որ հայը իր երդումներից մեկը դարձրել է «**էս հացը վկա**» արտահայտությունը:

Հաց բառն անգլերենում ունի 6, իսկ հայերենում՝ 11 իմաստ: Անգլերեն **bread** բառի բացատրության մեջ բացակայում են **1. ճաշ, ընթրիք, սեղան, 2. խնջույք, կոչունք, հացկերույթ, 3. մեղրի բլիթ, մեղրահաց, խորիխ, 4. հացահատիկի արտեր, հունձ, 5. ընկույզի, կաղնու, պիստակի միջուկը, 6. ցորեն, գարի, որից հաց են պատրաստում** իմաստները, իսկ հայերեն **հաց** բառի բացատրության մեջ՝ **1. եկեղեցական ծառայության ժամանակ օգտագործվող հաց** և **2. դրամ/փող** իմաստները: Սակայն հայերի աշխարհի լեզվական պատկերում **եկեղեցական ծառայության ժամանակ օգտագործվող հաց** իմաստը ներկայացված է առանձին՝ **նշխար** (հմմտ. անգլ. **Wafer**) բառով:

Երկու լեզուներում էլ **հաց** բառույթը ներկայացված է հոմանիշային լայն դաշտով՝ անգլերենում՝ **31**, հայերենում՝ **59** բառային միավոր, որոնք ներկայացված են երկուական իմաստային խմբերով. անգլերենում՝ **1. սնունդ, կենսամիջոց, 2. դրամ/փող**, հայերենում՝ **1. հացատեսակներ, 2. հացի պատրաստման հումք**:

Եվ անգլերենում, և՛ հայերենում **հաց** հասկացության առկայանում է հացատեսակ արտահայտող բազմաթիվ բառային միջոցներով՝ անգլերենում՝ **66**, հայերենում՝ **57** բառային միավոր, ինչը տվյալ լեզուներում **հաց** հասկացության կարևորման և արժևորման ապացույցներից է:

Հասկացությունների իմաստային վերլուծությունը ենթադրում է նաև հասկացությունների բառայնացման միջոցների կիրառման հաճախականության ուսումնասիրություն: British National Corpus (1970-2003) և արևելահայերենի ԱՐԵՎԱԿ (1800-2009) ազգային կորպուսների տվյալներով երկու լեզուներում էլ **հաց** հասկացության բառայնացման միավորների շարքում կիրառման հաճախականությամբ գերակշռում են **bread** (3621) և **հաց** (11182) բառային միավորները: Սակայն անգլերեն **bread** բառն ունի կիրառման մոտ 3 անգամ ցածր հաճախականություն՝ հայերենի **հաց** բառի համեմատությամբ: Այս փաստը կարելի է բացատրել է երկու լեզուներում առկա մտակաղապարների առաձևահատկություններով: «Մտունդ», «անվել» հասկացությունները ներկայացնող բազմաթիվ անգլերեն բառակապակցությունների հայերենում համապատասխանում են այնպիսի բառակապակցություններ, որոնք կազմվում են **հաց** բաղադրիչով: Օրինակ՝ անգլերենում կիրառվում է **go on hunger-strike**, հայերենում՝ **հացադուլ անել (bread-strike)**, անգլերենում՝ **lay the table**,

հայերենում՝ *հաց գգել (lay bread)*, անգլերենում՝ *have breakfast, have dinner, have supper, have meal*, իսկ հայերենում՝ *հաց ուտել (have bread)*:

Առավել հետաքրքրական է *bread* և *հաց* բառային միավորների հաջորդող բառայինների կիրառման հաճախականության վերլուծությունը: Անգլերենում *հաց* հասկացություն առկայացնող ամենահաճախական բառային միավորների աղյուսակում երկրորդը *cake* բառային է, իսկ հայերենում՝ *լավաշ* բառային միավորը:

Այսպիսով, երկու լեզուներում էլ ստեղծվել են *հաց* հասկացությի հասկացական և արժեքային որոշ համանման ընկալումներ՝ շնորհիվ նրա համընդհանուր նշանակության՝ **հանապազօրյա հաց, ապրուստի միջոց, սնունդ, ուտելիք**: Սակայն երկու լեզուներում էլ նկատվում են նաև *հաց* հասկացությի հասկացական և արժեքային տարբերակիչ բաղադրիչներ: Եթե բրիտանական աշխարհի լեզվական պատկերում *հաց* հասկացություն ունի նաև *Մբ. Հաղորդության ժամանակ օգտագործվող բիթ կամ հաց և դրամ/վոդ*, ապա հայերի աշխարհի լեզվական պատկերում այն ունի՝ *ցորեն, գարի, որից հաց են պատրաստում, հացահատիկի արտեր, հունձ, ճաշ, ընթրիք, սեղան, խնջույք, կոչունք, հացկերույթ, մեղրի բիթ, մեղրահաց, խորիսի, ընկուզի, կաղնու, պիստակի միջուկը, եկամուտ, եկամտի աղբյուր, հասույթ և կարողություն, ունևորություն, բարեկեցիկ վիճակ, կենսամակարդակ* հասկացական և արժեքային բաղադրիչները, որոնք տարբեր փոխաբերական կաղապարումներով են արտացոլվում տվյալ ազգերի աշխարհի լեզվական պատկերում:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Հաց հասկացությի փոխաբերական կաղապարների առկայացումը անգլերեն դարձվածային միավորներում՝ հայերենի զուգադրությամբ») փորձել ենք վեր հանել բրիտանական ազգային լեզվամտածողության յուրահատուկ շերտերը՝ ուսումնասիրելով *հաց* հասկացություն առկայացնող դարձվածային միավորների, ասացվածքների և առածների հիմքում ընկած փոխաբերական կաղապարները և զուգադրել դրանք հայերենի հետ, ինչի արդյունքում կազմվել են *հաց* հասկացությի զուգորդային դաշտերը անգլերենում և հայերենում:

Հաց հասկացությի հիմքում ընկած են այդ հասկացությը կարգայնացնող բազմաթիվ ճանաչողական փոխաբերություններ: Ընդհանուրն այն է, որ թե՛ անգլերենում, թե՛ հայերենում այդ հասկացությի հիմքում ընկած է **«հացը կեցությունն է»** փոխաբերական կաղապարը: Ուսումնասիրելով *հաց* հասկացություն առկայացնող անգլերեն ԴՄ-ները, ասացվածքներն ու առածները (62 միավոր), զուգադրելով դրանք հայերենի հետ (113 միավոր), և հիմք ընդունելով Ջ. Լակոֆֆի ճանաչողական փոխաբերության տեսությունը՝ **«հացը կեցությունն է»** ընդհանուր փոխաբերության համար առանձնացրել ենք մի շարք ենթափոխաբերություններ՝ *հացը ապրուստ է, հացը հյուրասիրություն է, հացը բարեկեցություն է, հացը մարդկային որակ է, հացը աշխատանք է, հացը մտերմություն է*:

Հաց հասկացույթն առկայացնող «**հացը ապրուստ է**» ճանաչողական փոխաբերությունն անգլերենում հիմնականում կադապարվում է *ամենօրյա հաց, ապրուստի միջոց ունենալու կամ վաստակելու* գաղափարում, ընդ որում խոսքը գնում է ոչ միայն պարզապես *հացի*, այլև այլ սննդատեսակների՝ *butter, cheese, water* մասին (*bread and butter, bread and cheese, daily bread, earn one's bread* և այլն) և դրանով իսկ տարբերվում ոչ բարեկեցիկ կամ աղքատ կեցությունից: Ի տարբերություն անգլերենի՝ հայերենում «**հացը ապրուստ է**» փոխաբերության հիմքում ընկած է *հացը*՝ որպես ապրուստի, գոյատևման հիմնական և միակ միջոց ընկալելու գաղափարը (*հացի խնդիր, հաց աշխատել, հացը իլել/կտրել* և այլն):

Բրիտանացիների լեզվամտածողության մեջ բացակայում է *քարից հաց քամել /դժվարությամբ ապրուստ ստեղծել/* դարձվածքը, որը հայերենում առանցքային մտակաղապար է և արտացոլում է ոչ բարենպաստ պատմաշխարհագրական պայմաններում հայի բազմաչարչար աշխատանքը:

Անգլերենում *հաց* հասկացույթի հիմքում ընկած «**հացը հյուրասիրություն է**» փոխաբերական կադապարն առկայանում է *bread* բաղադրիչով կազմված ԴՄ-ներում (*bread and butter letter, bread dance* և այլն), իսկ հայերենում՝ հիմնականում *հաց* բաղադրիչով կազմված ԴՄ-ներում, առածներում և սասցվածքներում (*Հացի աղին ու անալին տեսնել, աղ ու հացով մարդ և այլն*): Անգլերենում *bread* բառը հաճախ միավորվում է *butter* բառի հետ՝ իսկ հայերենում՝ *աղ* բառի հետ: Հատկանշական է, որ անգլերեն ԴՄ-ներում, սասցվածքներում և առածներում *bread* և *butter* բառերի համադրությունը ձեռք է բերում բարեկեցության իմաստ՝ *have one's bread buttered for life, butter one's bread on both sides* և այլն, իսկ համադրվելով *cheese* բառի հետ՝ *bread and cheese*՝ ոչ բարեկեցիկ կեցության իմաստ: Հայերենում «**հացը հյուրասիրություն է**» ճանաչողական փոխաբերությունն առկայանում է նաև այնպիսի փոխաբերական ենթակաղապարներով, որոնք արտացոլված չեն անգլերենում՝ *հացի քոռ /անհյուրասեր/, հացը ոտնատակ տալ /հյուրասիրությունն արհամարհել/ և այլն*:¹⁰

Երկու լեզուներում էլ *հաց* հասկացույթի հիմքում ընկած է «**հացը բարեկեցություն է** [+], [-]» ճանաչողական փոխաբերությունը: Անգլերենում «**հացը բարեկեցություն է** [+]» փոխաբերության հիմքում ընկած են *շքեղություն, լիություն, ձոխություն, հաջողություն*, իսկ հայերենում՝ *բերք, ապահով ապրուստի միջոցներ, հոգսերի բացակայություն* զուգորդումները: Եթե անգլերենում «**հացը բարեկեցություն է** [-]» ճանաչողական փոխաբերության շրջանակում աղքատությունը առավելապես ընկալվում է որպես *ապրուստի սակավ, նվազագույն միջոցներ*, ապա հայերենում նույն դաշտում առանձնանում

¹⁰ Բարեկեցության իմաստը ներկայացրել ենք դրական [+], իսկ բարեկեցության բացակայությունը՝ [-] նշաններով:

են **սով, դժվարություններ, մուրացկանություն** զուգորդումները: Երկու լեզուներում էլ մեկնաբանական և առկայացման առավել լայն դաշտ ունի **«հացը բարեկեցությունն է [-]»** ճանաչողական փոխաբերությունը:

Թե՛ անգլերենում, թե՛ հայերենում **hug** հասկացույթի բովանդակային դաշտում առկայանում է **«հացը մարդկային որակն է»** ճանաչողական փոխաբերությունը, որը կաղապարվում է մարդկային որական և բացասական որակներ ներկայացնող ԴՄ-ներում (անգլերեն՝ **15**, հայերեն՝ **27** ԴՄ), անգլերենում՝ **bread** և **grain** բաղադրիչներով կազմված ԴՄ-ներում, առածներում և ասացվածքներում՝ ***dry bread at home is better than roast meat abroad*** /**ձայրենասիրություն, ինքնաբավություն/**, ***take the bread out of a person's mouth*** /**չարություն, ազահություն/** և այլն, հայերենում՝ **hug**, **կորկոտ**, **ձավար**, **հացամեծար**, **հացաբեր** բաղադրիչներով կազմված ԴՄ-ներում **հացամեծար լինել /պատվելիություն, մեծահոգություն/**, **երկու երեսանի սաջի հաց /կեղծավորություն /** և այլն:

Լեզվանյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե անգլերենում մարդկային բացասական և դրական որակներ արտահայտող ԴՄ-ները, առածներն ու ասացվածքները քանակապես գրեթե հավասար են՝ դրական՝ **49 %**, բացասական՝ **51 %**, ապա հայերենում գերակշռում են բացասական որակ արտահայտող ԴՄ-ները՝ դրական՝ **36 %**, բացասական՝ **64 %**:

Անգլերենում **«հացը աշխատանք է»** ճանաչողական փոխաբերությունը չունի մեկնաբանական լայն դաշտ և առկայանում է ***no work no bread, never quarrel with your bread and butter*** և այլ խրատական առածներում: Հայերենում **«հացը աշխատանք է»** ճանաչողական փոխաբերությունը կաղապարվում է դարձվածային լայնածավալ շարքում՝ արտահայտելով պաշտոն՝ **հացով սեղ**, գումար վաստակելու հնարավորություն և այդ հնարավորության բացակայությունը՝ **հացից կտրել**, աշխատանքի ձևը՝ **քարից հաց քսվել** և այլն:

Հայերենում **hug** հասկացույթն առկայացնող ԴՄ-ների հիմքում ընկած է նաև **«հացը մտերմություն է»** փոխաբերական կաղապարը, որը բացակայում է անգլերենում՝ ***միասին աղ ու հաց ուտել*** և այլն: Ղարաբաղյան բարբառում առկա է նաև **աղն ու հացը ծույնան յրա յա ինում** ասացվածքը, որն ունի **բարեկամությունը նեղ օրում է ստեղծվում** նշանակությունը:

Ամփոփելով, կարելի է փաստել, որ հայերենում **hug** հասկացույթն առավել ընդգրկուն է և ունի իմաստային ու զուգորդային տարատեսակ շերտեր:

Երրորդ գլխի (**«Ջուրը հասկացույթը բրիտանացիների և հայերի աշխարհի լեզվական պատկերում»**) առաջին ենթագլխում (**«Ջուրը հասկացույթի լեզվական առկայացումը անգլերենում՝ հայերենի գուգադրությամբ»**) ներկայացվում է **ջրի**՝ որպես կեցության հիմնական պայմաններից մեկի հասկացական ընկալումները անգլերենում և համեմատվում հայերենում նույն հասկացույթի ընկալումների հետ:

Բազմաթիվ դիցաբանություններում **ջուրը** կապվում է թե՛ կյանքի ստեղծման, թե՛ մահվան հետ: Մի կողմից, **ջուրը** կենդանացնում է,

բեղմնավորում, մյուս կողմից՝ իր մեջ թաքցնում խորտակման և վախճանի սպառնալիքը: Գ. Բաշլյարը նշում է, որ **ջուրը** խորհրդանշական արժեքներից կարևորագույնն է, որ երբևէ ստեղծել է մարդկային միտքը. այն մաքրության նախատիպն է:¹¹

Բրիտանացիների համար **ջուրը** կյանքի աղբյուր է, միջավայրի անքակտելի տարր և մարդու կենսագործունեության պարտադիր պայման, ամենակարող, հզոր տարերք: Բրիտանական առասպելներում կան մարդու և ծովային էակների սիրո և ամուսնական միության բազմաթիվ օրինակներ, որոնցից ամենակնառուններից է Beowulf դյուցազներգությունը:

Հայերի աշխարհի պատկերում ջուր հասկացույթը ներկայացված չէ որպես միջավայրի անքակտելի մաս, քանզի Հայաստանը առավելապես **«Քարի երկիր»** է: Այդուհանդերձ, հայերի աշխարհի պատկերի անքակտելի մաս է երբեմնի **«Օռնից ծով» Հայաստանը**: Հայերենում նույնպես **ջուր** հասկացույթն ունի բազմաթիվ գույություններ, որոնք իրենց արտահայտությունն են գտել հատկապես առասպելաբանության մեջ և ժողովրդական ծեսերում:

Անզերենում **ջուր** հասկացույթի հասկացական բաղադրիչը մասամբ համընկնում է **ջուր** հասկացույթի հայկական ընկալումների հետ: Երկու լեզուներում էլ առկա են **ջուր** գոյականի հետևյալ իմաստները՝ **հեղուկ, որն ունի որոշակի որակական, գործառական, ֆիզիկական և քիմիական հատկանիշներ**, ինչպես նաև ջրի մի շարք ածանցյալ տարրեր, ինչպիսիք են՝ **անձրևաջուր, հանքային ջուր, թորած ջուր, կոնկրետ երկրի տիրապետության տակ գտնվող ջրային տարածք, ջրի պաշար, ջրամբար, բնակված տեղի մոտ ջուր, որտեղից ջուր են վերցնում գործածության համար, խմիչք, հեղուկ, որը ստեղծվում կամ շրջանառվում է կենդանի օրգանիզմներում (արցունք, քրտինք, մեզ, թուք, պտղաջուր, մարմնում գտնվող և ցավ պատճառող հեղուկ, բույսերի արտազատած հյութ կամ այլ հեղուկ), գոհարեղենի շոռ, փայլ, մաքրություն և թափանցիկություն**:

Սակայն, ի տարբերություն հայերենի՝ անզերեն **water** գոյականն ունի հետևյալ տարբերակիչ իմաստները՝ **ջուր պարունակող կամ ջրանման հեղուկ՝ օձանելիք կամ կոսմետիկական հեղուկ արտադրանք, հեղուկ դեղ, ջրի մակերես, ջրի մակարդակ, մակընթացություն, մակընթացության ժամանակ ջրի մակարդակ, գազավորված հեղուկ, հեշտորեն ցնդող ջրային լուծույթ, ջրաներկ, ջրաներկ նկար, գերազանց և բացառիկ որակ, ջրային ուղի, ջրային ճանապարհորդություն, ջուր-նշան (անտիկ և միջնադարյան փիլիսոփայության և աստղաբանության մեջ 4 հիմնական տարրերից մեկը), ընկերության կապիտալ (բաժնետոմսերի թողարկում առանց համալրված կապիտալի մեծացման), կեղծ կամ անիրական ակտիվային միավորներ (որոնք ուժձացնում են կապիտալի հաշվեկշռային արժեքը)**:

¹¹ Башляр Г. Вода и грезы. Опыт о воображении материи /Пер. с франц. Б.М. Скуратова. М.: Издательство гуманитарной литературы, 1998, с. 21.

Երկու լեզուներում էլ *ջուր* գոյականը ներկայացված է լայնածավալ հոմանիշային շարքով՝ անգլերենում՝ **18**, հայերենում՝ **17** բառային միավոր, որոնք ներկայացված են անգլերենում հինգ՝ **հեղուկ, արտազատուկ, ջրի մեծ ծավալ կամ տարածք, ջրի փոքր ծավալ կամ տարածք, խմիչք**, հայերենում՝ **երեք** իմաստային խմբերով՝ **հեղուկ, ջրի փոքր ծավալ կամ տարածք** և **ջրի մեծ ծավալ կամ տարածք**:

Անգլերենում *ջուր* բառը բավականին ծավալուն իմաստային լիցք ունի, ինչը խոսում է բրիտանական լեզվամտածողության մեջ նրա արժևորման և նրան բազմաթիվ հատկանիշներ վերագրելու մասին: Դրա վկայությունն է նաև անգլերենում առկա *water* բառով բառակապակցական և բառակազմական լայնածավալ դաշտը: Օրինակ՝ *waterer, waterish, waterless, water-like, watery, wateriness, low water, ice water* և այլն:

Երկու լեզուներում էլ *ջուր* հասկացույթի բառայնացման միջոցների շարքում կիրառման հաճախականությամբ գերակշռում են հասկացույթի անվանակարգում *water* (34098) և *ջուր* (15815) բառույթները, ընդ որում, անգլերեն *water* բառի կիրառման հաճախականությունը մոտ երկու անգամ բարձր է հայերեն *ջուր* բառային միավորի կիրառման հաճախականությունից, ինչը բրիտանական արժեհամակարգում *ջուր* հասկացույթի արժևորման վկայությունն է: Առավել հետաքրքրական է այն փաստը, որ անգլերենում *water* բառույթին կիրառման հաճախականության բարձր ցուցանիշով հաջորդում է *sea* (12480) բառույթը, այն դեպքում, երբ հայերենում *ջուր* հասկացույթն առկայացնող բառույթների կիրառման հաճախականության սանդղակում երկրորդը *սևձրև* բառային միավորն է՝ **1678**:

Բանահյուսական աղբյուրների և լեզվանյութի մեր վերլուծությունը փաստում է, որ *ջուր* հասկացույթի բառային մակարդակի իմաստային տիրույթում անգլերենում և հայերենում արտացոլված են ինչպես համարժեք, այնպես էլ ազգային յուրահատուկ նշույթավորում ունեցող բառույթներ: **Ջուր** հասկացույթի հասկացական և արժեքային բաղադրիչները համընկնում են համընդհանուր հարթություններում, իսկ դրանց տարբերությունները պայմանավորված են երկու պետությունների աշխարհագրական դիրքով, բնակլիմայական պայմաններով և պատմական փորձով:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում («*Ջուր* հասկացույթի փոխաբերական կաղապարների առկայացումը անգլերեն դարձվածային միավորներում՝ հայերենի զուգադրությամբ») ուսումնասիրվում են *ջուր* հասկացույթն առկայացնող անգլերեն ԴՄ-ները, ասացվածքներն ու առածները (152 միավոր), որոնք զուգադրվում են հայերենի հետ (285 միավոր)¹² և դրանց հիմքում ընկած փոխաբերական կաղապարները: «Փոխաբերական մեկնաբանության շնորհիվ կարելի է վեր հանել *ջուր* հասկացույթի դերը և որոշել դրա տեղը ժողովրդի

¹² Աշխատանքում վերլուծվել են հայերեն միայն 190 առավել հետաքրքիր օրինակները՝ անգլերենի հետ զուգադրելու նպատակով:

լեզվամտածողության մեջ, տեսնել, թե ինչ զուգորդումներ է այն առաջացնում, ինչ իրողություններ են, որ ընկալվում են **ջուր** հասկացույթի միջոցով»:¹³ Հիմք ընդունելով Ջ. Լակոֆֆի ճանաչողական փոխաբերության տեսությունը՝ որպես վերլուծության ելակետ ընդունում ենք «**Ջուրը կեցություն է**» ընդհանուր փոխաբերությունը և առանձնացնում մի շարք ենթատեսակներ՝ **ջուրը ազդակ է, ջուրը միջավայր է, ջուրը մարդկային որակ է, ջուրը բարեկեցություն է, ջուրը աշխատանք է, ջուրը կյանք է, ջուրը փոխհարաբերություն է, ջուրը փորձություն է**:

Լեզվանյութի վերլուծությունը թույլ է տալիս «**ջուրը ազդակ է**» ճանաչողական փոխաբերության մեջ առանձնացնել *ջրի* հետևյալ երկու ընդհանուր հատկությունները՝ **ոչնչացնող** և **արարող**: «**Ջուրը ազդակ է**» ճանաչողական փոխաբերությունն ունի իր ենթատեսակները՝ «**ջուրը դրական ազդակ է**» և «**ջուրը բացասական ազդակ է**»: Դարձվածքների, առածների և ասացվածքների վերլուծությունը ցույց է տալիս, որ «**ջուրը դրական ազդակ է**» ճանաչողական փոխաբերությունը ներառում է «**ջուրը արարում է**» և «**ջուրը բուժում է**», իսկ «**ջուրը բացասական ազդակ է**» փոխաբերությունը՝ «**ջուրը ոչնչացնում է**» (այն խաթարում է հեղինակությունը, երջանկությունը, հաջողությունը և այլն) կաղապարները: Անգլերենում «**ջուրը ազդակ է**» փոխաբերությունը ներկայանում է այն ԴՄ-ներում, որոնցում *ջուրն* առկայանում է *water, waterwork, flood, tear, swimmer, river, sea, rain, ocean, ditch, creek* բառույթներով, իսկ հայերենում՝ *ջուրն* առկայացնող *ջուր, ծով, ջրհեղեղ, անձրև, աղբյուր, կաթիլ, ջրաման, գետ* բառույթներով կազմված ԴՄ-ներում: Երկու լեզուներում էլ գերակշռում են «**ջուրը բացասական ազդակ է**» ճանաչողական փոխաբերությունն առկայացնող ԴՄ-ները՝ *get into hot water, բերանը տաք ջուր բերել*:

«**Ջուրը միջավայր է**» ընդհանուր փոխաբերության համար առանձնացնում ենք նաև «**ջուրը բնական միջավայր է**»՝ *here are plenty of (other) fish in the sea*, *ինչպես ձուկը ջրում* և «**ջուրը անբնական միջավայր է**»՝ *be like a fish out of water, շան քթից ջուր խմել* ենթատեսակները: «**Ջուրը միջավայր է**» ճանաչողական փոխաբերությունը ներկայացված է անգլերեն այն ԴՄ-ներով, որոնցում *ջուր* հասկացույթն առկայացնող *water, pond, sea* բառերով, իսկ հայերենում՝ *ջուր, աղբյուր, գետ* բառույթներով կազմված ԴՄ-ներում:

Անգլերենում ավելի լայն մեկնաբանական դաշտ ունի «**ջուրը բարեկեցություն է [+]**» (*above water, a tide taken at the flood leads on to fortune* և այլն) քան «**ջուրն բարեկեցություն է [-]**» (*in low waters, when it rains it's on all alike* և այլն) ճանաչողական փոխաբերությունը, իսկ հայերենում գերակշռում են «**ջուրը բարեկեցություն է [-]**» ճանաչողական փոխաբերությունն առկայացնող

¹³Вислова К.А. Концепт «вода»: лингвокультурный аспект (на материале словарей разного типа) // Ученые записки Таврического национального университета им. В.И. Вернадского, т. 20 (59). № 1. 2007, с. 284.

ԴՄ-ները: Հայերենում «**ջուրը բարեկեցություն է [+]**» ճանաչողական փոխաբերությունն առկայանում է առավելապես *աղբյուր, ջուր*, բաղադրիչներով կազմված ԴՄ-ներում, առածներում և ասացվածքներում՝ *աղբյուրի նման քիսել (եռայ, խփել, հոսել, հորդել)* և այլն, իսկ «**ջուրը բարեկեցություն է [-]**» ճանաչողական փոխաբերությունը՝ *ջուր* բաղադրիչով կազմված ԴՄ-ներում, առածներում և ասացվածքներում՝ *ջուր կտրել (կտրվել)*, *ջուրը գալ տասնել* և այլն:

Անգլերենում «**ջուրը մարդկային դրական որակ է**» ճանաչողական փոխաբերությունն առկայանում է հիմնականում *water* և *stream* գոյականներով կազմված ԴՄ-ներում, առածներում և ասացվածքներում, որոնք մատնանշում են՝ *ազդեցիկություն, հզորություն՝ draw a lot of water, ինքնավստահություն, հմտություն՝ take to something like a duck takes to water* և այլն, իսկ «**ջուրը մարդկային բացասական որակ է**» փոխաբերությունն առկայանում է հիմնականում *water, sea* և *river* բաղադրիչներով կազմված ԴՄ-ներում, առածներում և ասացվածքներում, որոնք արտահայտում են *կամազրկություն, weak as water, եսասիրություն՝ every miller draws water to his own mill* և այլն:

Հայերենում *ջուր* հասկացույթը նույնպես ներկայանում է «**ջուրը մարդկային դրական որակ է**» *ջուրը կակուղ, ջուրը քաղցր* (բարեսրտություն, հանդարտություն), *ջուր չպղտորող* (հանդարտություն, մեղմություն) և այլն) և «**ջուրը մարդկային բացասական որակ է**» (*ղարմանի տակի ջուր* (խորամանկություն, ծածկամտություն), *խմած աղբյուրի մեջ թթել* (սպերախտություն, երախտամոռություն)՝ և այլն)) ճանաչողական կաղապարներով: Ընդհանուր առմամբ, երկու լեզուներում էլ քանակական առումով կրկին գերակշռում է «**ջուրը մարդկային բացասական որակ է**» ճանաչողական փոխաբերությունը:

Թե՛ անգլերենում և թե՛ հայերենում առկայանում է նաև «**ջուրը աշխատանք է**» ճանաչողական փոխաբերությունը, օրինակ՝ *draw water in a sieve* ԴՄ-ը, որի համարժեքը կա հայերենում՝ *մաղով ջուր կրել*, այն է՝ *անօգուտ աշխատանք կատարել* և այլն:

Երկու լեզուներում էլ *ջուր* հասկացույթը ներկայացնող ԴՄ-ներում հանդիպում է նաև «**ջուրը փոխհարաբերություն է**» ճանաչողական փոխաբերությունը՝ *ships that pass in the right, սրտի գոյալից ջուր խմել*:

Անգլերենում *ջուր* հասկացույթը ներկայացնող ԴՄ-ներում առկայանում է նաև «**ջուրը փորձություն է**» ճանաչողական փոխաբերությունը՝ *be in deep water/waters., get into deep waters, fish in troubled waters*, որը բացակայում է հայերենում:

Ղարաբաղյան բարբառում նույնպես *ջուր* հասկացույթն առկայացնող շատ մնայուն դարձվածքներ կան՝ *հարյուր փարչավ ձուր խմած /շատ փորձառու մարդ/ խըլքատ ձուր խմիմ /դիմում են անխելքաբար գործողներին/, ձուր պրտողել, լղղել /անկարգություն, խառնաշփոթ մտցնել/ և այլն:*

Հայերենում ժամանակի ընթացքում ձևավորվել են նաև անեծքի, օրինանքի, կրոնական և ազգային-մշակութային բնույթի տարբեր իմաստներով ԴՄ-ներ՝ *աչքի լույսը ջուր դառնա* կուրանա՝ լույսից գրկվի/ և այլն:

Ամփոփելով, կարելի է փաստել, որ թե՛ անզլերենում, և թե՛ հայերենում *ջուր* հասկացության ընդգրկուն է, ունի իմաստային և գուգորդային տարատեսակ շերտեր: Երկու լեզուներում էլ *ջուր* հասկացության գուգորդային դաշտերը գրեթե համընկնում են բացառությամբ անզլերենում առկա **«ջուրը փորձություն է»** փոխաբերական կաղապարի:

Եզրակացության մեջ ամփոփվել են ուսումնասիրության հիմնական արդյունքները:

1. *Հաց* և *ջուր* հասկացությունները ճանաչողական լեզվաբանության հիմնական միավորներից են, որոնց ուսումնասիրությամբ կարելի է վեր հանել «լեզու-ճանաչողություն» առնչությունները, ինչպես նաև աշխարհի լեզվական պատկերի յուրահատկությունները՝ լեզվակրի գիտակցության մեջ:
2. *Հաց* և *ջուր* հասկացությունները, որպես մարդու կենսական գոյության կարևորագույն տարրեր առանձնահատուկ դեր և արժեք ունեն ազգային մտակաղապարների վերհանման գործում և մարդկային մտածողության մեջ հաճախ ընկալվում են փոխաբերաբար:
3. *Հաց* և *ջուր* հասկացություններն արտացոլում են ինչպես բնության և աշխարհի, այնպես էլ մարդու մարմնական և հոգևոր, հասարակական և ազգային կեցության առանձնահատկություններն ու դրանց փոխալայմանավորվածությունը, ուստի այդ հասկացությունների հիմքում ընկած են **«հացը կեցություն է»** և **«ջուրը կեցություն է»** փոխաբերական կաղապարները:
4. Երկու լեզուներում էլ ստեղծվել են *հաց* հասկացության հասկացական և արժեքային որոշ համանման ընկալումներ՝ շնորհիվ նրա համընդհանուր նշանակության՝ **հանապազօրյա հաց, ապրուստի միջոց, սնունդ, ուտելիք**: Մակայն երկու լեզուներում նկատվում են նաև *հաց* հասկացության հասկացական և արժեքային տարբերակիչ բաղադրիչներ: Եթե բրիտանացիների աշխարհի լեզվական պատկերում *հաց* հասկացություն արժևորվում է նաև որպես *Մբ. Հաղորդության ժամանակ օգտագործվող բլիթ կամ հաց* և հոգևորից միանգամայն տարբերվող նյութական արժեք՝ **դրամ/փող**, ապա հայերի աշխարհի լեզվական պատկերում այն հիմնականում ներկայանում է որպես կենսական կարևոր արժեք՝ **ցորեն, գարի, որից հաց են պատրաստում, հացահատիկի արտեր, հունձ, ճաշ, ընթրիք, սեղան, խնջույք, կոչունք, հացկերույթ, մեղրի բլիթ, մեղրահաց, խորիսխ**, ինչպես նաև ունի **եկամուտ, եկամտի աղբյուր, հասույթ և կարողություն, ունեորություն, բարեկեցիկ վիճակ, կենսամակարդակ** հասկացական և արժեքային բաղադրիչները:
5. Երկու լեզուներում էլ *հաց* բառույթը ներկայացված է հոմանիշային լայն դաշտով: Դրանք ներկայացված են երկուական իմաստային խմբերով:

անզլերենում *սնունդ, կենսամիջոց* և *դրամ/փող*, հայերենում *հացատեսակներ* և *հաց պատրաստման հումք* իմաստային խմբերով: Թե՛ անզլերենում, թե՛ հայերենում *հաց* հասկացույթն առկայանում է հացատեսակ արտահայտող բազմաթիվ բառային միջոցներով՝ անզլերենում՝ **66**, հայերենում՝ **57** բառային միավոր, որը տվյալ լեզուներում *հաց* հասկացույթի կարևորման և արժևորման կուռ հիմնավորումն է: Երկու լեզուների լեզվաբանական կորպուսներում էլ *հաց* հասկացույթը բառայնացնող միավորների շարքում կիրառման հաճախականությամբ գերակշռում են *bread* (3621) և *հաց* (11182) բառային միավորները, սակայն եթե անզլերենում կիրառման հաճախականությամբ երկրորդ տեղում *cake* բառն է, ապա հայերենում՝ *լավաշը*:

6. *Հաց* հասկացույթն առկայացնող ԴՄ-ների հիմքում ընկած են մի շարք փոխաբերական ընդհանուր կաղապարներ՝ **«հացը ապրուստ է», «հացը հյուրասիրություն է», «հացը բարեկեցություն է », «հացը մարդկային որակ է», «հացը աշխատանք է», իսկ «հացը մտերմություն է»** ճանաչողական փոխաբերությունը հանդիպում է միայն հայերենում: Հայ լեզվամտածողությունը ստեղծել է *հաց* հասկացույթի իմաստային և գուգորդային առավել ընդգրկուն տարատեսակ շերտեր, ինչի վառ ապացույցն են հայերենում *հաց* հասկացույթը ներկայացնող ԴՄ-ը և դրանց հիմքում ընկած փոխաբերական կաղապարների գերակշռությունը՝ անզլերենում *հաց* հասկացույթը ներկայացնող ԴՄ-ների և դրանց հիմքում ընկած փոխաբերական կաղապարների համեմատ:
7. *Ջուր* հասկացույթն արտացոլում է բրիտանացիների և հայերի կենսափիլիսոփայությունը, աշխարհընկալման կարևորագույն կարգերն ու մտակաղապարները: Երկու լեզուներում *ջուր* հասկացույթի բովանդակային պլանում առկա են ընդհանուր ընկալումներ, որոնք հիմնականում ներկայացնում են ջրի տեսակները, դրա որակական, գործառական, ֆիզիկական և քիմիական հատկանիշները: Սակայն կան նաև ընդգծված տարբերություններ. եթե անզլերենում *ջուր* հասկացույթի բովանդակության պլանում առկայանում են նաև *օծանելիք կամ կոսմետիկական հեղուկ արտադրանք*, ինչպես նաև ջրային տարածքների, ծովի հետ կապված՝ *ջրի մակերես, ջրի մակարդակ, մակընթացություն, ջրային ուղի, ջրային ճանապարհորդություն* հասկացական ընկալումները, ապա հայերենում *ջուր* հասկացույթն առավելապես առկայանում է իր տեսակների արժևորման փաստով՝ *Խաչալուայ ջուր, կենդանի ջուր, անմահական ջուր, անապակ ջուր, կակոդ ջուր, կանգուն ջուր, ձերմակ ջուր (աստղ):* Կան նաև որոշակի մշակութային տարբերություններ, այն է՝ հայերենում *ջուրը* կարևորվում է որպես ոռոգման միջոց, բուժիչ հատկություններ ունեցող հեղուկ (*հանքային ջրերով հարուստ հանգստյան վայր, առողջարան, բուժարան*), ինչպես նաև հաջողության (*տեսից ջուր լցնել*) խորհրդանիշ: Երկու լեզուներում էլ *ջուր* գոյականը ներկայացված է հումանիշային լայն

դաշտով և երկու լեզուներում էլ **ջուր** հասկացույթի բառայնացման միջոցների շարքում կիրառման հաճախականությամբ գերակշռում են հասկացույթի անվանակարգում **water** (34098) և **ջուր** (15815) բառույթները: Մակայն եթե կիրառման հաճախականությամբ անգլերենում երկրորդ տեղում **sea** բառն է, ապա հայերենում՝ **անձրևը**:

8. **«Ջուրը կեցություն է»** ընդհանուր փոխաբերությունը անգլերեն և հայերեն ՂՄ-ներում արտահայտված է հետևյալ ընդհանուր ենթատեսակներով՝ **«ջուրը ազդակ է», «ջուրը միջավայր է», «ջուրը մարդկային որակ է», «ջուրը բարեկեցություն է», «ջուրը աշխատանք է», «ջուրը կյանք է», «ջուրը փոխաբերություն է»,** իսկ **«ջուրը փորձություն է»** կադապարն առկա է միայն անգլերենում: Թե՛ անգլերենում, և թե՛ հայերենում **ջուր** հասկացույթն ընդգրկում է, ունի իմաստային և զուգորդային տարատեսակ շերտեր: Անգլերենում **ջուր** հասկացույթն առկայացնող ՂՄ-ների հիմքում ընկած փոխաբերական կադապարները գերակշռում են՝ հայերենում **ջուր** հասկացույթը ներկայացնող ՂՄ-ների և դրանց հիմքում ընկած փոխաբերական կադապարների համեմատ:
9. **Հաց և ջուր** հասկացույթներն առկայացնող ՂՄ-ները երկու լեզուներում ունեն համարժեքության եզրեր: Առավել մեծ համարժեքություն է դրսևորում **ջուր** հասկացույթը. անգլերենում **ջուր** և հարակից բաղադրիչներով կազմված ՂՄ-ներն ունեն գրեթե 26% համարժեքներ հայերենում (բացարձակ համարժեքներ՝ մոտավորապես 7 %), իսկ **հաց** և հարակից բաղադրիչներով կազմված ՂՄ-ները դրսևորում են համարժեքության առավել ցածր աստիճան (մոտավորապես 13.5%), որոնցից մի մասը բացարձակ համարժեքներ են (մոտավորապես 3 %):

Այսպիսով, **հաց և ջուր** հասկացույթները բրիտանացիների և հայերի աշխարհի լեզվական պատկերում կարևորագույն հասկացույթներից են: Անգլերենում և հայերենում **հաց** և **ջուր** հասկացույթների հիմքում ընկած փոխաբերական կադապարներն ունեն ոչ միայն ընդհանրություններ, այլ նաև որոշակի տարբերություններ՝ իրենց լեզվական առկայացումներում: Դրանց տեղին կիրառությունը կարող է առավել դյուրին դարձնել միջլեզվական առնչությունները, ինչպես նաև մի լեզվից մյուսը թարգմանություններ իրականացնելու գործընթացը:

Եզրափակելով նշենք, որ **հաց և ջուր** հասկացույթները լայն ընդգրկում ունեն, և մեկ ատենախոսության շրջանակներում հնարավոր չէ անդրադառնալ դրանց բոլոր առանձնահատկություններին և լեզվում դրանց արտացոլման բոլոր ձևերին, հետևապես ստացված արդյունքներն ու մշակված լեզվակույթը կարող են հիմք դառնալ լեզվաբանական հետազոտությունների համար:

Հետազոտության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. *Հաց* կոնցեպտը անգլերենում և հայերենում // “Գիտական տեղեկագիր”, 2/22/, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատարակչություն, 2010, էջ 147-149:

2. *Ջուր* կոնցեպտի լեզվամշակութային առանձնահատկությունները անգլերենում և հայերենում // «Լրատու», 1/12/, Երևան, Մեսրոպ Մաշտոց համալսարան, «Լիմուշ» հրատարակչություն, 2012, էջ 244-248:

3. *Հաց* և *Ջուր* հասկացությունների վերլուծությունը հայերենի և անգլերենի դարձվածային միավորների հիման վրա // “Աստղիկ”, 22-23, Գիրք թարգմանչաց, Երևան, Սահակ Պարթև տպագրատուն, 2012-2013, էջ 224-228:

4. *Թխվածք* հասկացության արտացոլման ազգային առանձնահատկությունները հայերենում և անգլերենում // “Գիտական տեղեկագիր”, 1/27/, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատարակչություն, 2013, էջ 241-245:

ФАТЯН КАРИНЕ ЭДУАРДОВНА

ЛИНГВОКОГНИТИВНЫЙ АСПЕКТ КОНЦЕПТОВ
ХЛЕБ И ВОДА В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ
В СОПОСТАВЛЕНИИ С АРМЯНСКИМ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10. 02. 07 - «Германские языки»

Защита состоится 22-го октября 2014г. в 11.00 часов на заседании специализированного совета 009 ВАК при ЕГУ (по адресу: 0025, г. Ереван, ул. А. Манукяна 1)

РЕЗЮМЕ

Реферируемая диссертация посвящена анализу лингво-когнитивных концептов *хлеб* и *вода* в английском в сопоставлении с армянским и выделению их общих и различительных особенностей.

Актуальность исследования.

В последние десятилетия значительные изменения, возникшие в научной жизни, привели к необходимости рассмотрения ряда существенных понятий. Миссию исследования феноменов в цепочке *язык - когнитивизм* взяла на себя когнитивная лингвистика.

Целью работы является проведение анализа смысловых, структурных и ценностных особенностей концептов *хлеб* и *вода* в английском мировосприятии и путем их сопоставления с армянским восприятием, выявление общих и различительных особенностей содержательного приращения этих концептов.

Предметом данного исследования являются концепты *хлеб* и *вода* в английском языке в сопоставлении с армянским.

Научная новизна исследования.

В диссертации впервые четко и акцентированно выделяются, характеризуются и анализируются концепты *хлеб* и *вода* и средства их актуализации на основе обширного языкового материала, который включает номинативные средства концептов *хлеб* и *вода*, их синонимические ряды и словарные манифестации в английском и армянском языках.

Методологической основой для нашего исследования послужили идеи и взгляды лингвистов в области когнитивной лингвистики и концептологии. При

анализе концептов *хлеб* и *вода* был использован метод сплошной выборки, концептуальный анализ, сопоставительный анализ, статистический анализ и методы параллельного комментирования. Было также выполнено исследование лингвистических корпусов EANC (Восточноармянский национальный корпус) и BNC (Британский национальный корпус).

Языковым материалом исследований послужили английские и армянские фразеологические единицы, пословицы и поговорки, актуализирующие концепты *хлеб* и *вода*.

Теоретическая значимость исследования.

Результаты данного исследования могут способствовать дальнейшему исследованию единиц концептуальной системы языка, а также выработке сопоставительно - концептуальной методики.

Практическая ценность исследования.

Результаты данного исследования могут быть использованы при составлении спецкурсов по когнитивной лингвистике и концептологии, сопоставительной семантике английского и армянского языков, а также при создании практических пособий и словарей.

Структура работы. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы.

Во введении обосновывается актуальность темы, отмечается новизна исследования, представляются основные цели и задачи работы, кратко излагаются принципы и методы исследования.

В первой главе работы проведено всестороннее исследование термина *концепт* и основные методы анализа концепта, в частности, теория когнитивной метафоры, а также были исследованы лингвистические концепты *хлеб* и *вода* и выявлены их понятийные и ценностные составляющие в английском в сопоставлении с армянским.

Во второй главе исследованы средства актуализации концепта *хлеб* на словарном и фразеологическом уровнях, систематизированы полученные результаты и выявлена роль лингвистических и экстралингвистических факторов в английском языке в сопоставлении с армянским.

В третьей главе были исследованы лингвистические средства актуализации концепта *вода*, систематизированы полученные результаты и выявлена роль лингвистических и экстралингвистических факторов в английском языке в сопоставлении с армянским.

В заключении обобщаются результаты исследования.

KARINE PATYAN

LINGUO-COGNITIVE ASPECT OF THE CONCEPTS
BREAD AND WATER IN ENGLISH COMPARED WITH ARMENIAN

SUMMARY

In the last decades significant changes in scientific thinking resulted in the necessity of reconsidering a number of essential notions in linguistics.. The notion of meaning has always been high on the agenda of linguistic studies, as the words in different languages can transfer the same meaning but the way of thinking peculiar to some language community can be different from that of another community.

The topicality of the research: The concepts *bread* and *water* are of particular interest as they are among the universal cognitive concepts which have the same references but often different significance and perceptions in different languages.

The scientific novelty of the research:

- for the first time the concepts *bread* and *water* are singled out, characterized and analyzed in English and Armenian on the basis of rich language material,
- the comparative study of the concepts *bread* and *water* is new and interesting as different languages are bearers of different cognitive perspectives which have different verbalization means in the language,
- the data provided by the corpus analysis have enabled us to reveal the differences in the perception and utilization frequency of these universal concepts, depending on the language activity of a certain language-bearer,
- the representation of the associative fields of the concepts *bread* and *water* in two languages mentioned above is new, too.

The theoretical significance of the research: The results of the given research can contribute to further investigations of the conceptual system of a language. The research is of value not only in the field of Cognitive Linguistics, but also in those of Semantics and Conceptology.

The practical value of the research: The research may contribute to the development of cross-cultural and cross-linguistic relations, and to the realization of adequate translations from English into Armenian and from Armenian into English. The results of the research can have a number of practical applications: they can be applied in the courses of cognitive linguistics, cross-cultural communication, as well as for compiling manuals and dictionaries.

The structure of the work: The structure of the work is determined by the issues touched upon in the research. It consists of an introduction, three chapters, conclusion and references.

Chapter 1 reviews the term **concept**, as well as the **conceptual metaphor** as a means of disclosing the associative fields of the concept.

Chapter 2 aims at studying the concept *bread* in English, at revealing its conceptual and valuable constituents in English, investigating the actualization means of the concept *bread* on the basis of the word and phraseological units, systematizing the results and comparing them with Armenian.

Chapter 3 aims at surveying the concept *water* in English, at revealing its conceptual and valuable constituents in English, investigating the actualization means of the concept *water* on the basis of the word and phraseological units, systematizing the results and comparing them with Armenian.

The cognitive concept *bread* and *water* are complex mental structures, discrete units of collective consciousness which reflect a number of conceptual and value peculiarities and can serve as a basis for revealing some traits peculiar to English and Armenian.

Conclusion summarizes the main findings of the research exposed in the present dissertation.